World Vision

Վորլդ Վիժն Հայաստան

Ազգային գրասենյակ
Ռոմանոս Մելիքյան 1
Երեւան, 0065, ՀՀ

Հեռ.՝ 374 10 749 118, 749 119
Ֆաքս՝ 374 10 749 148

www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

Armenia

National Office
R. Melikyan 1, Malatia-Sebastia
Yerevan 0065, Armenia

tel: 374 10 749 118, 749 119
fax: 374 10 749 148

www.wvarmenia.am
http://meero.worldvision.org


**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ,**
**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**
**ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**
**ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ**
**ՂԵԿԱՎԱՐ ՇԱՂԻԿ ՄԱՐՈՒԽՅԱՆԻՑ**

# ԴԻՄՈՒՄ

**Դիմումատու**

Իրավաբանական անձի անվանումը «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ------------------------------------------------------------

Գործունեության հասցե ՀՀ, ք. Երևան, 0031, Ռոմանոս Մելիքյան 1-----------------------------------------------

Հեռախոսահամար(ներ) 060 491010---------------------------------------------------------------------------

Էլեկտրոնային փոստի հասցե(ներ) wvarmenia@wvi.org, aida_muradyan@wvi.org ----------------------------

**Դիմումի առարկան**

Կազմակերպությունը ցանկանում է ընդգրկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Այդ կապակցությամբ սույն դիմումին կից ներկայացվում է՝

1. Կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճեն,
2. Կանոնադրություն,
3. Սոցիալական պաշտպանության ոլորտում Վորլդ Վիժն Հայաստանի գործունեության նկարագրություն,
4. Կազմակերպության կողմից լիազորված անձի մասին տեղեկանք,
5. Վորլդ Վիժն Հայաստանից Խորհրդի կազմում ընդգրկվելու թեկնածու Աիդա Մուրադյանի ինքնակենսագրություն:

№ Ձ/19257-16
31 05 2016.
[illegible] աշխատանքի և սոցիալական հարցերի [illegible] նախարարության [illegible] ընդհանուր բաժին

Կազմակերպությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տվյալ պահին ֆինանսավորում և/կամ դրամաշնորհ

ստանում է ☐ չի ստանում ☐

Դիմող՝ 30 մայիսի, 2016թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 25-ի N 670 որոշմամբ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ՕԻԲ 002084

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

,,ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ,, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
(առանձնացված ստորաբաժանման հիմնարկի անվանումը)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաշվառված է պետական ռեգիստրի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ կողմից
(ստորաբաժանման անվանումը)

Հաշվառման համարը 211.060.03995

Հաշվառման տարին, ամիսը, ամսաթիվը 29.05.06թ.

Ծածկագիրը (կոդը) 39195929

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ. Տ.

«29» մայիսի 200 6 թ.

# ՆԵՐԴԻՐ 001

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 25-ի N 670 որոշմամբ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Վկայական ՕԻԲ 002084

Անվանումը ,,ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ,, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հիմնադրի անվանումը ,,ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ,,
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը 375070, ք.Երևան, Երվանդ Քոչարի փ.19/1

Այլ տեղեկություններ Մասնաճյուղի տնօրեն՝ ՋԵԼԼԻ ՄԱՐԿ ՆՈՐՏՈՆ
Անձ. 3007243 տրվ. 29.11.05թ.
Բն.վայրը՝ ք.Երևան,Արաբկիրի 50փ.4.Փափազյան 2նրբ.85տ.
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության
կոլեգիայի 07.02.97թ. 5/2-3 որոշմամբ, նախարարի
22.01.01թ. թիվ 127 հրամանով

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ.

«29» մայիսի 200 6 թ.

Հավելված 1
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 25-ի N 673 որոշման

ՆԵՐԴԻՐ 002

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ,
ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

ՍՏԻ 002084

Վկայական ____

Անվանումը ,,ԿԱՐԻՏԱՍ" ԿԱԹՈԼԻԿ [illegible],, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հիմնադրի անվանումը ____

Գտնվելու վայրը ____

Այլ տեղեկություններ Տնօրեն՝ ԳԱԶԱՐ ԱԼԵՔՍԱՆԴԵՐ ՍԵՐՈԲ
Կացության քարտ ԱԻ0006132 տրվ. 03.03.2010թ. ՀՀ
Ոստիկանության անձնագրային վարչության կողմից
Բն.վայրը՝ ՀՀ ք.Երևան,Ի.Մելիքյան 1
Նոր տնօրենի մասին տեղեկ.գրանցում 02.04.2010թ.
Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ

Պետական ռեգիստր

(ստորագրություն)

Կ.Տ.

«02» ապրիլի 2010 թ

# ՆԵՐԴԻՐ 004

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման,
հիմնարկի հաշվառման
N 01Ք002084 վկայականի

Առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի անվանումը **«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Հիմնադրի անվանումը **«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ»**

Գտնվելու վայրը **Ռ.ՄԵԼԻՔՅԱՆ / Շ / 1 ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ 0065 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի ղեկավար **Տնօրեն՝ ՀԱՆՍ-ՅՈՒՐԳԵՆ ԲԵԴԵՐՍԿԻ** անձնագիր **358503297**, տրվ. **2006-10-30**, **Տ.ԴԵՍՊ** կողմից , հասցե **Ռ.ՄԵԼԻՔՅԱՆ / 1 Ք.ԵՐԵՎԱՆ 0031 ՀԱՅԱՍՏԱՆ**

Այլ տեղեկություններՆոր **խմբագրությամբ կանոնադրության(գտնվելու վայրի հասցեի փոփոխություն)պետական հաշվառում:**
**Փոփոխություն(ներ)ը հաշվառվել է(են) 2014-11-26-ին**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

«26» 11 2014 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

# ՆԵՐԴԻՐ 003

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման,
հիմնարկի հաշվառման
N 01Ք002084 վկայականի

Առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի անվանումը **«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Հիմնադրի անվանումը **«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ»**

Գտնվելու վայրը

Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի ղեկավար **Տնօրեն՝ ՀԱՆՍ-ՅՈՒՐԳԵՆ ԲԵԴԵՐՍԿԻ** անձնագիր **358503297**, տրվ. **2006-10-30**, **Տ.ԴԵՍՊ** կողմից , հասցե **Ռ.ՄԵԼԻՔՅԱՆ / 1 Ք.ԵՐԵՎԱՆ 0031 ՀԱՅԱՍՏԱՆ**

Այլ տեղեկություններՆոր **տնօրենի մասին տեղեկությունների գրառում:**
**Փոփոխություն(ներ)ը հաշվառվել է(են) 2013-12-23-ին**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Կ.Տ.

(ստորագրություն)

«23» 12 2013 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

Օրինակ N 2

| | |
|---|---|
| Հաստատված է՝ | **Approved:** |
| «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից | **by the Board of Directors of "World Vision International" International Beneficent Organization** |
| 7 հունվարի 2014 թ. | **January 7, 2014** |
| Լիազորված անձ՝ Ժիրայր Էդիլյան | **Zhirayr Edilyan, Authorised person** |
| ............................ | ............................ |
| **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ** | **CHARTER** |
| **«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ»** | **OF THE ARMENIAN BRANCH OF** |
| **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ** | **"WORLD VISION INTERNATIONAL" INTERNATIONAL BENEFICENT ORGANIZATION** |
| **ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ** | |

| 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ | 1. GENERAL PROVISIONS |
| --- | --- |
| 1.1. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը (այսուհետ՝ «Հայաստանյան մասնաճյուղ») հիմնվել է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Տնօրենների խորհրդի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության (ՀՀ օրենսդրություն) համաձայն: Հայաստանյան մասնաճյուղը հանդիսանում է նախկինում գրանցված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» մարդասիրական կազմակերպության (ՀԿ) Հայաստանյան մասնաճյուղի իրավահաջորդը: | 1.1. The Armenian Branch of 'World Vision International' International Beneficent Organization (hereinafter referred to as the "the Armenian Branch"), was established by the Resolution of the Board of Directors of "World Vision International" International Beneficent Organization, in accordance with the legislation of the Republic of Armenia (RA legislation). The Armenian Branch is a legal successor of formerly registered Armenian Branch of "World Vision International" Humanitarian Organization (NGO). |
| 1.2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությունը (ՎՎԻ), այսուհետ՝ «Հիմնադիր», շահույթի նպատակ չհետապնդող, ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություն է, որը գրանցված է Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգի օրենքների համաձայն, որի գրանցված գրասենյակը գտնվում է հետևյալ հասցեում. Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կալիֆորնիա նահանգ, Մոնրովիա, Վեստ Չեստնաթ պողոտա թիվ 800: | 1.2. "World Vision International" International Beneficent Organization (WVI), hereinafter referred to as "the Founder", is a not-for-profit, non-governmental, non-commercial organization, registered under the laws of the State of California, United States of America, with registered office at the following address: # 800 West Chestnut Avenue, Monrovia, State of California, United States of America. |
| 1.3. Ինչպես և Հիմնադիրը՝ Հայաստանյան մասնաճյուղը ոչ պետական, շահույթի նպատակ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է: Հայաստանյան մասնաճյուղը չի հետապնդում որևէ քաղաքական նպատակներ և ընգրկված չէ որևէ քաղաքական շարժման մեջ: | 1.3. Likewise the Founder, the Armenian Branch is a non-governmental, non-for-profit, non-commercial organization. The Armenian Branch does not pursue any political goals and is not involved in any political movement. |
| 1.4. Հայաստանյան մասնաճյուղը չունի իրավաբանական անձի կարգավիճակ և գործում է Հիմնադրի կողմից հաստատված սույն կանոնադրության համաձայն: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանյան մասնաճյուղը հաշվառվում է ՀՀ պետական ռեգիստրում: | 1.4. The Armenian Branch does not have a status of an independent legal person and carries out its activities in accordance with this Charter approved by its Founder. In the manner prescribed by the RA legislation, the Armenian Branch shall be registered with the RA State Registry. |

| | | | |
|---|---|---|---|
| 1.5. | Իր գործունեությունը իրականացնելիս Հայաստանյան մասնաճյուղը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով ու հրահանգներով և սույն կանոնադրությամբ: | 1.5. | While implementing its activities the Armenian Branch shall be governed by the RA legislation, resolutions and instructions of the Founder and this Charter. |
| 1.6. | Հայաստանյան մասնաճյուղը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: | 1.6. | The Armenian Branch carries out its activities throughout the territory of the Republic of Armenia. |
| 1.7. | Պետությունը (Հայաստանի Հանրապետությունը) պատասխանատու չէ Հայաստանյան մասնաճյուղի պարտավորությունների համար, ինչպես նաև Հայաստանյան մասնաճյուղը պատասխանատու չէ պետության պարտավորությունների համար: Հիմնադիրն իր գույքով է պատասխանատու Հայաստանյան մասնաճյուղի պարտավորությունների համար: | 1.7. | The State (Republic of Armenia) is not responsible for the liabilities of the Armenian Branch, likewise the Armenian Branch is not responsible for the liabilities of the State. The Founder with its assets is responsible for the liabilities of the Armenian Branch. |
| 1.8. | Հիմնադիրը թույլատրում է Հայաստանյան մասնաճյուղին օգտագործել իր խորհրդանիշը: Խորհրդանիշի էսկիզը կցվում է սույն կանոնադրությանը: | 1.8. | The Founder permits the Armenian Branch to use its logo. The outline of the logo is attached hereto. |
| 1.9. | Հայաստանյան մասնաճյուղը անվանվում է՝<br>• հայերեն լեզվով՝ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ.<br>կրճատ՝ ՎՎ հայաստանյան մասնաճյուղ.<br>• անգլերեն լեզվով: Armenian Branch of “World Vision International” International Beneficent Organization<br>կրճատ՝ WV Armenian Branch. | 1.9. | The name of the Armenian Branch is:<br>• in Armenian: «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>abbreviated: ՎՎ հայաստանյան մասնաճյուղ.<br>• in English: Armenian Branch of “World Vision International” International Beneficent Organization<br>abbreviated: WV Armenian Branch. |
| 1.10. | Հայաստանյան մասնաճյուղն ունի կլոր կնիք՝ հայերեն և անգլերեն մակագրությամբ, և դրոշմակնիքներ: | 1.10. | The Armenian Branch has a round seal, engraved in Armenian and English languages, and stamps. |
| 1.11. | Հայաստանյան մասնաճյուղի գտնվելու վայրն է՝<br>Հայաստանի Հանրապետություն, 0065, | 1.11. | The Armenian Branch is located at # 1, Romanos Melikyan Street, Yerevan, 0065, Republic of Armenia. |

ք. Երևան, Ռոմանոս Մելիքյան փող., թիվ 1:

## 2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

## 2. GOALS AND OBJECTIVES OF THE ARMENIAN BRANCH

2.1. Հայաստանյան մասնաճյուղը ունի հետևյալ նպատակները և խնդիրները.

- ներկայացնել Հիմնադրին Հայաստանի Հանրապետությունում և պաշտպանել Հիմնադրի շահերը երկրում.
- իրականացնել տարբեր երեխայակենտրոն, սոցիալական, առողջապահական, համայնքների զարգացման և այլ բարեգործական ու զարգացման ծրագրեր Հայաստանում.
- աջակցել Հիմնադրի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների և նպատակների իրականացմանը.
- համագործակցել ՎՎԻ-ի համակարգի այլ գրասենյակների և մասնաճյուղերի հետ, աջակցել ՎՎԻ-ի համակարգի բոլոր կառուցվածքների արդյունավետ փոխհարաբերություններին:

2.1. The goals and objectives of the Armenian Branch are as follows.

- To represent the Founder in the Republic of Armenia and to protect interests of the Founder in the country;
- To implement various child-oriented, social, healthcare, community development and other charitable and relief projects in Armenia;
- To assist in the implementation of the goals and objectives outlined in the Charter of the Founder;
- To co-operate with the other WVI Partnership offices and divisions and support the effective interaction of all structures within the WVI.

## 3. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ

## 3. ASSETS OF THE ARMENIAN BRANCH

3.1. Հայաստանյան մասնաճյուղի ամբողջ գույքի սեփականատերը դրա Հիմնադիրն է: Հայաստանյան մասնաճյուղի գույքի կազմավորման աղբյուրներ են՝

- Հիմնադրի ներդրումները, Հիմնադրի կողմից Հայաստանյան մասնաճյուղին փոխանցված գույքային և ոչ գույքային իրավունքները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

3.1. The owner of all the assets of the Armenian Branch is the Founder.

The assets of the Armenian Branch are formed through the following sources:

- Investments by the Founder, transfer of assets, proprietary and non-proprietary rights by the Founder to the Armenian Branch;
- Any other sources not prohibited by the RA legislation.

3.2. Հայաստանյան մասնաճյուղի սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության օրենքների պաշտպանության ներքո:

3.2. Ownership of the Armenian Branch is protected by the laws of the Republic of Armenia. Assets of the Armenian Branch cannot be confiscated

| | |
|---|---|
| Հայաստանյան մասնաճյուղի գույքը չի կարող բռնագանձվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: | except cases provided in the RA laws. |
| 3.3. Հայաստանյան մասնաճյուղի դրամական միջոցները պահվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկերում բացված հաշիվներում: Հայաստանյան մասնաճյուղի հաշիվներից գումարները կարող են դուրս գրվել միայն մասնաճյուղի ցուցումով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: | 3.3. Monetary assets of the Armenian Branch are kept at bank accounts opened in accordance with applicable RA legislation. Sums deposited may be withdrawn from the bank accounts of the Armenian Branch only with the relevant order given by the Armenian Branch or in cases provided in the RA laws. |
| **4. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ** | **4. MANAGEMENT OF THE ARMENIAN BRANCH** |
| 4.1. Հայաստանյան մասնաճյուղի ընդհանուր կառավարումն իրականացնում է Հիմնադիրը: Հիմնադիրն վերջնական իրավունք ունի լուծել Հայաստանյան մասնաճյուղի գործունեությանը վերաբերող ցանկացած հարց՝ ներառյալ, բայց չսահմանափակելով հետևյալը,<br>(ա) Հայաստանյան մասնաճյուղի կանոնադրության հաստատումը, դրա *բոլոր փոփոխությունների* և լրացումների հաստատումը.<br>(բ) Մասնաճյուղի ղեկավարի նշանակումը.<br>(գ) Հայաստանյան մասնաճյուղի կառուցվածքի հաստատումը.<br>(դ) Հայաստանյան մասնաճյուղի հաշվառումից հանելու մասին որոշման ընդունումը: | 4.1. General management of the Armenian Branch is conducted by the Founder. The Founder has an ultimate right to resolve any matters related to the activities of the *Armenian* Branch, including but not limited to:<br>(a) Approval of the Charter of the Armenian Branch, any amendments and supplements thereto;<br>(b) Appointment of the Branch Manager;<br>(c) Approval of the structure of the Armenian Branch;<br>(d) Adopting decision on de-registration of the Armenian Branch. |
| 4.2. Հայաստանյան մասնաճյուղի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Ազգային տնօրենը (Մասնաճյուղի ղեկավարը): Ազգային տնօրենը նշանակվում է Հիմնադրի կողմից և գործում է Հիմնադրի կողմից տրված լիազորագրի հիման վրա, և իրավունք ունի կայացնել ցանկացած որոշում Հայաստանյան մասնաճյուղի գործունեության վերաբերյալ՝ այդ լիազորությունները սահմաններում: | 4.2. Day-to-day activities of the Armenian Branch are managed by the National Director (Branch Manager). The National Director is appointed by the Founder and acts in accordance with the Power of *Attorney issued by the* Founder and has the right within these authorities to take any decision related to the activities of the Armenian Branch. |
| 4.3. Ազգային տնօրենը՝ իր լիազորությունների | 4.3. The National Director organizes, within the limits of his/her powers, the activities of the Branch and is reportable for the |

| | |
|---|---|
| սահմաններում, կազմակերպում է Մասնաճյուղի գործունեությունը և հաշվետու է Հիմնադրին Մասնաճյուղի գործունեության համար: Ազգային տնօրենն իրավունք ունի վերալիազորել իր իրավասությունները Հայաստանյան մասնաճյուղի այլ աշխատողներին: | activities of the Armenian Branch to the Founder. The National Director may delegate his/her powers to other employees of the Armenian Branch. |
| **5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ** | **5. FINANCIAL CONTROL** |
| 5.1. Հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական գործունեությունը խստորեն վերահսկվում է Հիմնադրի կողմից: Իր ֆինանսական գործունեությունն իրականացնելիս Հայաստանյան մասնաճյուղը պետք է պահպանի նաև Հիմնադրի կողմից հաստատված հաշվապահական և ֆինանսական հաշվետվողականության պահանջները: Հայաստանյան մասնաճյուղի հաշվապահական համակարգը պետք է արտացոլի մասնաճյուղի բոլոր ֆինանսական գործարքները և պետք ընդգրկի մանրամասն հաշվետվություններ, որոնք պարբերաբար պետք է ներկայացվեն Հիմնադրին: | 5.1. The financial activities of the Armenian Branch shall be strictly supervised by the Founder. In conducting its financial activities the Armenian Branch shall also comply with the accounting and financial reporting requirements adopted by the Founder. The accounting system of the Armenian Branch shall reflect all the financial operations of the Branch and shall contain detailed reports to be regularly submitted to the Founder. |
| 5.2. Հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական գործունեությունը ստուգելու համար Հիմնադիրը կարող է պայմանագրային հիմունքներով ներգրավել անկախ աուդիտորի: | 5.2. The Founder may contract an independent auditor to audit the financial activities of the Armenian Branch. |
| **6. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ** | **6. ACTIVITIES OF THE ARMENIAN BRANCH** |
| 6.1. Հայաստանյան մասնաճյուղն իրականացնում է իր ծրագրերը Հիմնադրի ցուցումների հիման վրա՝ Հիմնադրի կողմից սահմանված նպատակների և խնդիրների համաձայն: Պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտելը Հայաստանյան մասնաճյուղի գործունեությանը արգելվում է, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ | 6.1. The Armenian Branch carries out its activities according to instructions of the Founder, pursuant to the goals and objectives set forth by the Founder. Interference of the state agencies and local authorities in the affairs of the Armenian Branch is prohibited, except the cases stipulated by RA legislation. In accordance with the instructions provided by the Founder the Armenian Branch has |

| | |
|---|---|
| սահմանված դեպքերի: Հայաստանյան մասնաճյուղն իրավունք ունի պլանավորել իր գործունեությունը, որոշել իր հեռանկարները, ինչպես նաև լուծել իր գործունեության հետ կապված հարցերը՝ Հիմնադրի ցուցումների համաձայն: | authority in planning its activities. determining prospects as well as resolving the issues related to its activities. |
| 6.2. Հայաստանյան մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ստացած ամբողջ եկամուտն օգտագործում է իր կանոնադրական նպատակներն ու խնդիրները իրականացնելու համար: | 6.2. All income gained by the Armenian Branch in the course of its activities shall be directed for implementation of the goals and objectives set forth in this Charter. |
| 6.3. Հայաստանյան մասնաճյուղն իրավունք ունի պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ: Իր գործունեության ընթացքում Հայաստանյան մասնաճյուղն ազատ է որոշում կայացնել իր կողմից կնքվող պայմանագրերի առարկայի և պայմանների վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: | 6.3. The Armenian Branch has the right to enter into contracts and agreements with other legal entities and physical persons. While implementing its activities the Armenian Branch has full freedom in selecting the content of the contracts and agreements, their terms and conditions, in line with the RA legislation. |
| 6.4. Հայաստանյան մասնաճյուղի հարաբերությունները Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և նշված մարմինների հետ կնքված պայմանագրերով: | 6.4. The relationship of the Armenian Branch with the state and local authorities of the Republic of Armenia shall be governed by the laws of the Republic of Armenia and agreements signed with these authorities. |
| **7. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ** | **7. PERSONNEL OF THE ARMENIAN BRANCH** |
| 7.1. Հայաստանյան մասնաճյուղի աշխատակիցներ կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ: | 7.1 The employees of the Armenian Branch can be citizens of the Republic of Armenia, as well as nationals of foreign countries. |
| 7.2. Աշխատանքային հարաբերությունները օտարերկրյա քաղաքացիների հետ կարգավորվում են Հիմնադրի կամ ՎՎԻ-ի համապատասխան գրասենյակների հետ կնքված անհատական աշխատանքային պայմանագրերով: | 7.2. The employment relations with employees who are nationals from foreign countries are defined by the individual employment contracts signed with the Founder or relevant WVI offices. |

| | | | |
|---|---|---|---|
| 7.3. | Աշխատանքային հարաբերությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ կարգավորվում են նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերով և պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությանը: | 7.3. | The employment relations with employees who are citizens of the Republic of Armenia are governed by their employment contracts and should comply with the RA legislation. |
| 7.4. | Հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները՝ Հիմնադիրը որոշում է աշխատակիցների աշխատավարձերի չափը, աշխատանքային ժամերի և արձակուրդների տևողությունը, ինչպես նաև այլ աշխատանքային պայմանները: | 7.4. | With consideration of the requirements of the RA legislation, the Founder shall determine the wages to be paid to its employees, working hours and length of holidays, as well as other terms and conditions of employment. |
| 7.5. | Հայաստանյան մասնաճյուղը սահմանված կարգով ապահովում է իր աշխատակիցների համար անվտանգ աշխատանքային պայմաններ: | 7.5. | The Armenian Branch shall provide safe working conditions for its employees in accordance with the RA applicable requirements. |
| **8.** | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ** | **8.** | **FINANCIAL YEAR** |
| 8.1. | Հայաստանում սահմանված հարկային հաշվետվողականության նպատակով Հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվար ամսվա առաջին օրը և ավարտվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա վերջին օրը, բացառությամբ առաջին ֆինանսական տարվա, որը սկսվում է մասնաճյուղի հաշվառման օրվանից: Հայաստանյան մասնաճյողը պետք է նաև պահպանի Հիմնադրի կողմից սահմանված ներքին ֆինանսական հաշվետվողականության ժամանակացույցը: | 8.1. | For Armenian tax reporting purposes the fiscal year of the Armenian Branch shall begin on the first day of January of each year and end on the last day of December of each year, with the exception of the first fiscal year, which will start on the date of registration of the Branch Office. The Armenian Branch shall also comply with the time schedule for internal financial reporting defined by the Founder. |
| 8.2. | Հայաստանյան մասնաճյուղն ընթացիկ հաշվապահական հաշվառում է վարում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Հիմնադրի կողմից սահմանված պահանջների համաձայն: | 8.2. | The Armenian Branch shall conduct day-to-day accounting in the manner prescribed by the RA legislation, as well as in accordance with the requirements adopted by the Founder. |
| **9.** | **ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ** | **9.** | **DE-REGISTRATION OF THE ARMENIAN BRANCH** |

| | |
|---|---|
| 9.1. Հայաստանյան մասնաճյուղը կարող է հանվել հաշվառումից Հիմնադրի որոշման հիման վրա: Հայաստանյան մասնաճյուղի հաշվառումից հանելը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: | 9.1. Armenian Branch may be de-registered based on the decision of the Founder. De-registration of the Armenian Branch shall be carried out in accordance with the RA legislation. |
| 9.2. Հաշվառումից հանելուց հետո և պարտատերերի բոլոր պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը հանդիսանում է Հիմնադրի սեփականությունը և տնօրինվում է Հիմնադրի հայեցողությամբ: | 9.2. All the assets, remaining at the end of de-registration process of the Armenian branch and after payment of all debts due to the creditors of the Armenian Branch, shall belong to the Founder and shall be disposed by the Founder, at his discretion. |
| **10. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ** | **10. ALTERATION AND AMENDMENT OF THE CHARTER** |
| 10.1. Հիմնադիրը՝ իր որոշմամբ, կարող է փոփոխել և լրացնել Հայաստանյան մասնաճյուղի կանոնադրությունը կամ հաստատել նոր կանոնադրություն: Կանոնադրության բոլոր փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև վերախմբագրված կանոնադրությունը հաշվառվում են ՀՀ պետական ռեգիստրում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: | 10.1. The Charter of the Armenian Branch may be altered, amended or a new Charter may be adopted by decision of the Founder. All the alterations and amendments to the Charter, as well as newly adopted Charter shall be registered with the RA State Registry in the manner prescribed by the RA legislation. |
| **11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ** | **11. CONCLUSIVE PROVISIONS** |
| 11.1. Սույն Կանոնդրությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Երկու տարբերակների միջև տարաձայնությունների դեպքում հայերեն տարբերակն է գերակայում: | 11.1. This Charter is prepared in Armenian and English languages. In case of discrepancies between two versions, the Armenian version shall prevail. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ, ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Վորլդ Վիժն Հայաստանի գործունեությունը սոցիալական պաշտպանության ոլորտում

Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության կոչումն է բարեփոխել աղքատության մեջ ապրող երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների կյանքը: Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը աշխատում է Հայաստանի 6 մարզերում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Վորլդ Վիժնը իր ծրագրերն իրականացնում է 14 տարածքային գրասենյակների միջոցով հետևյալ ուղղություններով՝

- Վաղ մանկական զարգացում,
- Երեխայի պաշտպանություն,
- Երիտասարդների զարգացում,
- Տնտեսական զարգացում:

Ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով Վորլդ Վիժնը համագործակցում է ՀՀ կառավարության, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայ Առաքելական Եկեղեցու, ՄԱԿ-ի գործակալությունների, ԱՄՆ ՄԶԳ և միջազգային այլ դոնոր կազմակերպությունների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների և համայնքների հետ:
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կազմակերպությունը համագործակցում է մասնավորապես Երեխայի պաշտպանության ծրագրի շրջանակներում:

**Երեխաների պաշտպանության ծրագրի նպատակն է բռնությունից զերծ ընտանիքները, համայնքները և դպրոցներ բոլոր երեխաների, հատկապես առավել խոցելիների համար: Այս ծրագրի շահառու են հանդիսանում շուրջ 190 000 երեխաներ**

Վորլդ Վիժնը այս նպատակին հասնելու համար իր ծրագրերի միջոցով աշխատում է երեք մակարդակներում՝ ընտանիք և երեխա, համայնքային և ազգային:

Ընտանիքի և երեխայի հետ աշխատանքները նպատակ են հետապնդում խրախուսել դրական ծնողավարությունը ծնողների և ուսուցիչների շրջանում, բարձրացնել առավել խոցելի ընտանիքների դիմակայունությունը, նպաստել ընտանիքների հոգևոր դաստիարակությանը, իրազեկել երեխաներին և ընտանիքի մյուս անդամներին իրենց իրավունքների մասին:

Համայնքային և մարզային մակարդակում աշխատանքների նպատակն է հզորացնել համայնքային ծառայությունները՝ հատկապես նպաստելով, որ դրանք հասանելի դառնան առավել խոցելի ընտանիքների համար: Կազմակերպությունը փորձում է նաև խթանել երեխաների պաշտպանության համար բողոքարկման մեխանիզմների ստեղծումն ու կատարելագործումը և նպաստել ներառական կրթության իրականացմանը:

Ազգային մակարդակում աշխատանքներն ուղղված են երեխաների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության բարելավմանը, ինչպես նաև առկա օրենսդրության կիրառության ապահովմանը: Մասնավորապես, ազգային մակարդակում Վորլդ Վիժն Հայաստանն աշխատում է նպաստել ապաինստիտուցիոնալիզացիային: Այս ուղղությամբ կազմակերպությունն իրականացրել է մի շարք հաստատություններում գտնվող երեխաների, նրանց ընտանիքների, ծագման համայնքների խորը գնահատում և համապատասխան եզրակացություններով ներկայացրել ԱՄՀՆ, անհատական զարգացման և աջակցության ծրագրերի շրջանակներում աջակցել է բազմաթիվ երեխաների և նրանց կենսաբանական ընտանիքների վերամիավորմանը: Վորլդ Վիժնի կողմից մշակվել է նաև «Երեխաների և նրանց ընտանիքների աջակցության կենտրոնի» մոդել և ներկայացվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Մեկ այլ ուղղություն է համայնքային սոցիալական աշխատողի հաստիքի ներդրումը, որը երեխաների պաշտպանության համակարգում կունենա առանցքային դերակատարություն՝ ապահովելով երեխաների պաշտպանության դեպքերի վաղ հայտնաբերումը և կանխարգելումը:

Վորլդ Վիժն Հայաստանը դիմում է ներկայացրել միանալու Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին, իսկ իր գործունեության մարզերում՝ տարածքային մակարդակում ընդունված համաձայնագրերին՝ նպատակ ունենալով գործուն մասնակցություն ցուցաբերել սոցիալական աջակցության բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման, սոցիալական ծառայությունների տրամադրման, ռեսուրսների համադրման գործում և այլն:

World Vision

Վորլդ Վիժն Հայաստան

Ազգային գրասենյակ
Ռոմանոս Մելիքյան 1
Երեւան, 0065, ՀՀ

Հեռ.՝ 374 10 749 118, 749 119
Ֆաքս՝ 374 10 749 148

www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

Armenia

National Office
R. Melikyan 1, Malatia-Sebastia
Yerevan 0065, Armenia

tel: 374 10 749 118, 749 119
fax: 374 10 749 148

www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

ք.Երևան

30.05.2016

# ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Աիդա Մուրադյանին (անձնագիր՝ BA 0177358), որ նա 2014 թ. հոկտեմբերի 22-ից հանդիսանում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի աշխատող և զբաղեցնում է Գործառնությունների բաժնում Երեխաների պաշտպանության և կրթության ծրագրի ղեկավարի պաշտոնը:

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆ
WV ARMENIAN

Աիդա Առաքելյան

Հարավային Կովկասի Մարդիկ և մշակույթի ղեկավար

# ԱԻԴԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հասցե՝ ք.Երևան, Բաշինջաղյան 88, բն. 8

Հեռ. +374 95 005 461

Էլ. հասցե՝ aida_muradyan@wvi.org


2011թ.-ից ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբանի արտոնագիր #1290
Մասնագիտացված է հանրային իրավունքի ոլորտում, մասնավորապես՝ խոցելի խմբերի և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 2014 թ- առ այսօր | Վորլդ Վիժն Հայաստան<br>Երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար |
| 2012- 2014 | ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ<br>Պաշտպանի գլխավոր խորհրդական, Երեխաների իրավունքների պաշտպան |
| 2011-2012 | ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ<br>Խոցելի խմբերի պաշտպանության վարչության պետ |
| 2009-2011 | Միջազգային կարմիր խաչ<br>Ղարաբաղյան հակամարտությունների ժամանակ անհայտ կորած անձանց ընտանիքների իրավաբանական աջակցություն ծրագրի իրավաբան-խորհրդատու |
| 2009-2011 | Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակ<br>Իրավաբան-խորհրդատու, փախստականի կարգավիճակի վերաբերյալ հարցերով փաստաբան |
| 2009-2010 | «Առողջության և կրթության հայկական կենտրոն» ՀԿ<br>Իրավաբան |
| 2007-2009 | «Դիֆենս» իրավաբանական ընկերություն<br>իրավաբան |

2006-2008 **Երևանի Հյուսիսային համալսարան**

Իրավագիտության և տնտեսագիտության ամբիոնի վարիչի օգնական

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2005-2009 Հյուսիսային համալսարան գերազանցության դիպլոմ, բակալավրի որակավորում

Մասնագիտություն՝ իրավաբան, իրավագետ

## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2009 «Լրագրողական հետաքննություն» ծրագրի շրջանակներում տեղեկատվական իրավունքի վերաբերյալ դասընթաց, Եվրոպական լրագրության կենտրոնի և Տեղեկատվության և իրավունքի ինստիտուտ, Նիդեռլանդների թագավորություն, Ամստերդամ

2010 Փախստականի կարգավիճակի շնորհման միջազգային ստանդարտեր, Սանկտ Պետերբուրգի պետական իրավաբանական համալսարան,Սանկտ Պետերբուրգ, ՌԴ

2010 Անչափահասների արդարադատությունը և վատ վերաբերմունքը ՔԿՀ-ներում և ԶՊԿ-ներում, Ուկրաինայի օմբուդսմենի գրասենյակ, (կազմակերպված UNICEF-իկողմից), Կիև, Ուկրաինա

2011 Անչափահասների ներգրավծությունը զինված հակամարտություններում, Ժնև, Շվեյցարիա

| | |
|---|---|
| 2012 | Ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունն եր, քննության և որակման առանձնահատկությունները, ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Երևան, Հայաստան |
| 2012 | Խոցելի խմբերի սոցիալական իրավունքները և դրանց ապահովմանն ուղղված անհրաժեշտ քայլերը, Վարշավա, Լեհաստան |
| 2013 | Մարդու իրավունքների կրթության 2-րդ միջազգային դասընթաց, Equitas կանադական կազմակերպություն, Կիև, Ուկրաինա |
| 2015 | Երեխաների իրավունքների պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում, Վրաստան, Թբիլիսի |

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- Մասնակցություն Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական կոմիտեի զեկույցի պատրաստմանը
- Գիտական համեմատական վերլուծություն. ՀՀ օրենսդրության և Փախստականների կարգավիճակի շնորհման միջազգային ստանդարտների անհամապատասխանությունները
- ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտե այլընտրանքային զեկույց
- «Սոցիալական ապահովության իրավունքը և դրա գործնական ապահովումը Հայաստանի Հանրապետությունում» արտահերթ հրապարակային զեկույց
- Արտահերթ հրապարակային զեկույց «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում»
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումները՝ ՌԱԵՀ-ի /ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողով/ Հայաստանի վերաբերյալ զեկույցի հիման վրա տրված Հայաստանի Հանրապետության կողմից Միջանկյալ հանձնարարականների կատարման վերաբերյալ

- Խարանի և Խտրականության դրսևորումը Կրոնական, ազգային և սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ. Միջազգային և ներպետական օրենսդրության համեմատական վերլուծություն
- «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» կատարման վերաբերյալ զեկույց ուղղված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին

## ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Լեզուների իմացություն.** Հայերեն-մայրենի, անգլերեն-գերազանց, ռուսերեն-գերազանց
**Համակարգչային գիտելիքներ.** MS Office, Internet
**Անձնական տվյալներ.** 11 հունիսի 1988թ.